



# Սերգեյ Դովլատով

## Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս տասնմեկերորդ

(«Սովետական Էստոնիա»: Օգոստոս: 1976 թ. ) «ՏԱԼԼԻՆԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՀՈՒԲԵՐՏ ԻԼՎԵՍԻՆ»: Երեկ Լիննամետսա գերեզմանատանը տեղի ունեցավ Էստոնական ժողովրդի հավատարիմ զավակ, հեռուստատուդիայի անփոփոխ տնօրեն, Սոցիալիստական աշխատանքի հերոս Հուբերտ Վոլդեմարի Իլվեսի հուղարկավորությունը:

Հուբերտ Իլվեսի ողջ կյանքը կոմունիզմի գործին անձնուրաց ծառայության օրինակ էր:

Նրա համար հատկանշական էին բարձր պատասխանատվության զգացումը, ուշադիր վերաբերմունքը մարդկանց նկատմամբ եւ զարմանալի անձնական պատասխանատվությունը...

Սգո քայլերգի ներքո հասարակայնության ականավոր ներկայացուցիչները տանում են բազմաթիվ ծաղկեպսակներով զարդարված դագաղը:

Թարմ գերեզմանի մոտ հնչում են հրաժեշտի հանդիսավոր խոսքեր...

Սգո միտինգին մասնակցեցին երեւելի կուսակցական ու սովետական աշխատողներ, հանգուցյալի գործընկերները, Էստոնական ռադիոյի, հեռուստատեսության, խոշոր թերթերի աշխատակիցները:

Հուբերտ Իվկեսի հիշատակը հավերժ վառ կմնա մեր սրտերում»:

Ընկեր Դովլաթով, դուք սեւ կոստյում ունե՞ք: Խմբագիրը դժգոհ խոժոռում է հոնքերը: Նա տհաճությամբ է նման հարց տալիս հանրապետական կուսակցական թերթի աշխատակցին: Խմբագիրը նորածնի բեժ դեմք ունի, լայն գոտկատեղ ու մանկական ազգանուն՝ Տուրոնոկ:

Հունեմ, ասացի: Սրանով եմ ման գալիս:

Ոչ թե այս պահին, այլ տանը:

Ես առհասարակ կոստյում չունեմ, ասում եմ:

Կարող էի բացատրել, որ տուն էլ չունեմ, ապաստան, բնակավայր: Որ սենյակ եմ վարձում Աստված գիտի որտեղ...

Իսկ թատրոն ինչպե՞ս եք հաճախում:

Կարող էի ասել, որ թատրոն չեմ հաճախում: Բայց հենց նոր թերթում տպագրվել էր «Անօժիտը» ներկայացման իմ գրախոսությունը: Գրել էի Դիմա Շերի պատմածով: Գրախոսությունը գովում էին բանավիճային բնույթի համար...

Դե լավ, եկեք խոսենք ըստ էության, հոգնած ասաց խմբագիրը: Վախճանվել է Իվկեսը:

Տուրք տալով կեղծավորության ստոր սովորությանս, տրտում տեսք ընդունեցի:

Դուք նրան ճանաչո՞ւմ էիք, հարցրեց խմբագիրը:

Ոչ, ասում եմ:

Իվկեսը հեռուստաստուդիայի տնօրենն էր: Նրա թաղումը լուրջ միջոցառում է: Հուսով եմ, հասկանում եք:

– Այո:

Մեր խմբագրությունն էլ պետք է ներկայացված լինի: Պատրաստվում էինք ուղարկել Շաբլինսկուն:

Եվ ճիշտ է, ասում եմ, Միշկան այնտեղից անընդհատ ինչ-որ փողեր է ստանում:

Խմբագիրը կնճռոտեց դեմքը:

Միխայիլ Բորիսովիչը զբաղված է: Նա մեկնում է Սաարենաա կղզի՝ գործուղման: Կլենսկին բացատրում է: Այստեղ ներկայացուցչական արտաքինով մարդ է պետք: Բուշը երրորդ օրն է խմում է եւ այդպես շարունակ: Կանգ ենք առել ձեր թեկնածության վրա: Աղաչում եմ, խայտառակ չանեք: Հարկավոր է հանդես գալ հակիրճ, ջերմ խոսքով: Հարկավոր է... Մի խոսքով, պահեք ձեզ այնպես, իբր լավ ճանաչել եք հանգուցյալին...

Մի՞թե ես ներկայացուցչական արտաքին ունեմ:

Դուք բարձրահասակ եք, խոստովանեց Տուրոնոկը, Կլյուխինայի հետ եմ խորհրդակցել:

Ըհը, մտածում եմ, Գալոչկան: Դե լավ...

Հենրիխ Ֆրանցովիչ, ասացի, սրտովս չէ դա: Միստիֆիկացիայի հոտ է գալիս: Իվլեսին չեմ ճանաչել: Կեղծ ողբալ չեմ ուզում: Ուղարկեք Շաբլինսկուն: Իսկ ես, հանոգեցիք, կգնամ Սաարենաա:

Դա բացատրում է: Դուք պրոբլեմային նյութեր չեք գրում:

Չեք հանձնարարում՝ չեմ գրում:

Ձեզ հանձնարարում էինք գերմանացիների մասին նյութը, հրաժարվեցիք:

Ես գտնում եմ, որ նրանց պետք է թողնել, որ գնան:

Դուք միամիտ մարդ եք: Մեղմ ասած:

Ինչո՞ւ: Միությունում ավելի շատ գերմանացի կա, քան հայ: Բայց գերմանացիները նույնիսկ ինքնավարությունից են զուրկ:

Նրանք ի՞նչ գերմանացի: Դա գաղութարարների երրորդ սերունդն է: Նրանք վաղուց էստոնացի են դարձել: Լեզուն, մշակույթը, մտածելակերպը... Տիպիկ էստոնացիներ են: Հայրերն ու պապերը էստոնիայում են ապրել...

Բորյա Ռոյբլատի պապն էլ էստոնիայում է ապրել: Հայրը նույնպես էստոնիայում է ապրել: Իսկ Բորյան այդպես էլ հրեա մնաց: Ու առանց աշխատանքի...

Գիտեք, Դովլաթով, ձեզ հետ խոսել չի լինում: Դեմագոգիայի նուրբ հնարքներ ունեք: Ձեզ աշխատանք ենք տվել, ընդառաջել ենք: Կարծում էինք՝ կհասունանաք: Ավելի լուրջ կպահեք ձեզ...

Աշխատում են, չէ՞: Գրում են:

Եվ նույնիսկ լավ եք գրում: Յուրնան ինքը վերջերս մեջքերեց ձեր գրածը . «... կառուցողական գաղափարը կորավ անպատասխանատու էքսպերիմենտի քառում»... Խոսքն այդ մասին չէ: Ձեր ապաքաղաքականությունը, ձեր մանկամտությունը... ձեզանից ամեն բան սպասելի է: Դուք երկու հարյուր հիսուն ռուբլի վաստակում եք: Վերաբերմունքը ծեր նկատմամբ լավ է, գնահատում են ձեր հումորը, ձեր ոճը: Իսկ դուք ինչո՞վ եք փոխհատուցում: Ինչո՞ւ պետք է ես ժամանակ վատնեմ նման անպտուղ խոսակցությունների վրա: Ես պնդում եմ Շաբլինսկուն փոխարինելու խնդրանքս: Նա ժամանակավորապես ձեզ է տալիս իր բաճկոնը: Փորձեք: Կախիչի վրա է...

Փորձեցի:

Ի՞նչ դարձօձիքներ են, ասում են, Կարմիր աստղի շքանշանն է պակասում...

Վե՛րջ, ընդհատեց խմբագիրը, գնացե՛ք:

Ատում են գերեզմանատնային արարողությունները: Ոչ թե այն պատճառով, որ դա մահվան հետ է կապված, մերձավոր, փառք Աստծո, չեն թաղել: Իսկ

օտարների նկատմամբ անտարբեր եմ: Այդուհանդերձ թաղումներն ասում եմ: Մահվան կողքին ցանկացած շարժում անբարոյական է թվում: Թաղումներն ասում եմ ցուցադրական լինելու չափ գեղեցիկ, համոզիչ վշտի զգացողության համար: Ուրիշ, օտար մարդկանց արցունքների համար: Դժվարությամբ ճնշվող ուրախության զգացման համար՝ «Ոչ թե դու, այլ ուրիշն է մահացել»: Քիչ անց խմելու առիթով բարձրացող գաղտնի հուզմունքի համար: Հանգուցյալի մասին չափը անցնող հաճոյախոսությունների համար: (Միշտ ցանկացել եմ գոռալ . «Նա թքած ունի: Կենդանի մնացածների նկատմամբ ներողամիտ եղեք: Օրինակ, իմ նկատմամբ»):

Եվ ահա պետք է Շաբլինսկու փոխարեն մասնակցեմ սգո հանդիսությունների, վիշտ ու կսկիծ խաղամ:

Ջանգում եմ հեռուստաստուդիա .

Թաղման հարցերով ո՞վ է զբաղվում:

Ինքը Իվկեսը:

Աթոռից քիչ մնաց ընկնեի:

Ռ-անդո Իվկեսը, հանգուցյալի որդին: Եվ թաղման հանձնաժողովը:

Հեռախոսի համարը կասե՞ք: Գրում եմ... Շնորհակալ եմ: Ջանգում եմ: Պատասխանում եմ մերձբայթյան առոգանությամբ .

Դուք հանգուցյալի ազգականների՞ց եք:

Գործընկերներից:

Ձեր ազգանունը Շաբլինսկի՞ է: Քիչ էր մնում ասեի՝ «Այո»:

Շաբլինսկին գործուղման մեջ է: Ինձ հանձնարարված է փոխարինել նրան:

Եկեք: Երրորդ հարկ, տասներկուերորդ սենյակ:

Գալիս եմ: Տասներկուերորդ սենյակում հավաքված բոլոր մարդիկ թևկապներով  
էին: Ինձ ծանոթ մարդ չկար: Շաբլինսկու բաճկոնը, որ հիշում էր տիրոջ  
ուվագծերը, նեղում ու կաշկանդում էր ինձ: Ինձ անհարմար էի զգում, ինչպես  
սատկած կետածուկը լողավագանում: Ձին՝ շան բնում:

Ոտքս կախ գցեցի՝ գրի առնելու այս փոխաբերությունները:

Մեղանի մոտ նստած կինը դիմեց ինձ .

Շաբլինսկին դո՞ւք եք:

Ոչ:

«Սովետական Էստոնիայից» պետք է լինի Շաբլինսկին:

– Նա գործուղման մեջ է: Ինձ հանձնարարված է փոխարինել նրան:

Պարզ է: Ելույթի տեքստը պատրաստե՞լ եք:

Տե՞քստը: Ես կարծում էի, դա... հուզախառն իմպրովիզացիա պետք է լինի:

Կանոնակարգ կա... Տեքստը հարկավոր է համաձայնեցնել:

Կարո՞ղ եմ վաղը ներկայացնել:

Նեղություն մի կրեք: Ահա Շաբլինսկու պատրաստած տեքստը:

Հրաշալի է, ասում եմ, շնորհակություն: Նրանց տված թերթիկներին կարդում եմ .

«Ընկերներ: Ինչպե՛ս եմ նախանձում Իվկեսին: Այո, այո, մի զարմացեք: Ինձ  
համակել է սպիտակ նախանձը: Ի՛նչ բովանդակալի կյանք: Ի՛նչ պատկառելի  
արդյունքներ: Երագողի ու մարտիկի ինչպիսի՛ նախանձելի ճակատագիր»...

Ճետտ թվարկվում էին արժանիքներն ու վաստակը: Ավարտվում էր այսպես .

«...Քնիր Հուբերտ Իվկես: Դու հազվադեպ էիր քունդ առնում: Քնիր...»:

Այս ամենը արտասանելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Թղթի վրա ամեն բան գրում են: Բայց բարձրաձայն, մարդկանց ներկայությամբ...

Դիմեցի սեղանի առջև նստած կնոջը .

Կուզենայի իմ կողմից էլ մի բան ավելացնել... Որոշ փոփոխություններ կատարել... Ես այդ աստիճան զգացմունքային չեմ...

Հիմնականը հարկ կլինի թողնել: Արդեն վիզան կա...

Բնական է:

Տվյալներն արտագրեք:

Արտագրեցի:

Մի քանի խոսք Շաբլինսկու մասին: Նրա հայրը բռնադատված է եղել: Հորեղբոր՝ հայտնի պրոֆեսորի, անունը հիշատակվում է հանրահայտ մեմուարներում: Երեւի թե միակը, ում մասին համակրանքով է խոսվում:

Միշտան մեծացել է դժգույն ճամբարային բնակավայրում: Թվաբանություն ու ռուսաց լեզու նրան դասավանդել են ռուսական գիտության ռահվիրաները... բուշլատներում փաթաթված: Այդպես ձեւավորվել են նրա պատկերացումները կյանքի մասին: Նա դարձավ տոկուն ու ճարպիկ տղամարդ: Խոսքերին չէր վստահում, վճռական էր գործողություններում: Շատ էր կարդում: Կարողանում էր համատեղել պոեզիայի նկատմամբ հետաքրքրությունն ու տեխնիկայի նկատմամբ սերը: Դիպլոմ չունենալով, աշխատել է որպես կոնստրուկտոր: Ընդունվում է համալսարան: Դառնում արդյունաբերությունը լուսաբանող լրագրող: Պոեզիայի ու տեխնիկայի հիբրիդը այլեւս նրա տարերքն է:

Նպատակին հասնելու համար պատրաստ էր ամեն ինչի: Միջոցներից չէր խորշում: Նպատակը, սակայն, գնալով ավելի ու ավելի աղոտ էր դառնում: Բարու ու չարի այլընտրանքը վերածվել էր հաջողության ու անհաջողության այլընտրանքի: Չափազանց ակտիվ կենսագործունեությունը արգելակում էր բարոյական աճը: Երբ մեզ ծանոթացրին, նա տիպիկ լրագրող էր՝ երկվությամբ

ու ցինհզմով հանդերձ: Լրագրողների մասին հիանալի է ասել Ֆորդը . «Ազնիվ լրագրողը մեկ անգամ է վաճառվում»: Այդուհանդերձ, նրա միտքը իդեալիստական եմ համարում: Լրագրության ոլորտում կան գնման կետեր, կոմիսիոն եւ անգամ էժանացված խանութներ: Այսինքն՝ վերավաճառքը եռում է:

Կա կյանք՝ սքանչելի, տանջալի, ողբերգականությամբ լի: Եվ կա աշխատանք, որ լավ վարձատրվում է: Աշխատանք, որի նպատակը ավելի հստակ, ողբերգականությունից զուրկ, ներդաշնակ կյանքի ստեղծումն է: Թղթի վրա:

Լրագրողը նստած գրում է . «Ահեղ տասնինը թվականն էր»:

Շեղվում է մի պահ՝ կնոջն ասելու համար՝ «Գարիկ Լերները խոստացել է երեք տուփ լուծվող սուրճ դասավորել»...

Խոհանոցից կինը գոռում է՝ «Ինչպե՞ս թե: Լերներին դեռ չե՞ն՝ ձերբակալել»:

Գրիչը, սակայն, արդեն շարունակում է իր գործը: Ենթադրենք . «Բնությունից կորզեցինք եւս մեկ գաղտնիք»... Կամ չգիտեմ՝ «Նյու Յորքում շահալրակը բույր չունի»...

Լրագրողի կյանքում առկա է այն ամենը, ինչը զարդարում է ցանկացած արժանապատիվ տղամարդու կյանքը:

Անկեղծությո՞ւն: Լրագրողը անկեղծորեն ասում է ոչ այն, ինչ մտածում է:

Ստեղծագործ աշխատա՞նք: Լրագրողը անդադար ստեղծագործում է՝ ցանկալին իրողություն ներկայացնել փորձելով:

Սե՞ր: Լրագրողը քնքշորեն սիրում է այն, ինչ սիրո արժանի չէ:

Շեղվեցինք, թերեւս:

Հեռուստատեսությունից գնացի Մարինայի մոտ: Սի ամբողջ տարի էր արդեն մեր միջեւ մտավոր մոտիկության պես հարաբերություններ էին: Թշնամանքի ու այլասերության երանգներով:



Մարինան աշխատում էր մեր թերթի քարտուղարությունում: Աշխատանքից առաջ եւ հետո նրա մեջ գերակշռում էին երեսնամյա չամուսնացած կնոջ թերահավատությունն ու փոքր-ինչ կոպիտ ուղղախոսությունը:

Ժամանակին Շաբլինսկու ընկերուհին էր: Ինչպես որ մեր թերթի բոլոր մյուս աշխատակցուհիները: Բոլորն անխտիր վաղ թե ուշ գիջում էին նրա համառ նկրտումներին: Նման հաշողության գաղտնիքը երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ: Հետո, սակայն, հասկացա: Շաբլինսկին սպանում էր իր ոտնձգությունների աներկյիմաստությամբ: Լիտվացի պրակտիկանտ աղջկան, օրինակ, որի հետ կարգին ծանոթ էլ չէր, ասել էր .

Ես ձեզ սիրում եմ: Եվ անգամ չբացառված տրիպերը ինձ ետ չի պահի:

Մի օր ասում եմ .

Միշկա, ես կեղծ բարեպաշտ չեմ: Բայց դու չորս ընկերուհի ունես: Շուտով Նոր տարի է: Հո չե՞ս կարող չորսին էլ հրավիրել:

Ինչո՞ւ չեմ կարող, հարցրեց Շաբլինսկին:

Սկանդալ կլինի:

Չի բացառվում, մտորումների մեջ ընկավ նա:

Ի՞նչ ես անելու:

Շաբլինսկին մտածեց-մտածեց, հետո հոգոցով ասաց .

Եթե միայն պատկերացնեիր, թե ինչ լրջագույն խնդիր է դա...

Մարինային թողեց, որովհետեւ որոշել էր ամուսնանալ: Մարինան որպես կին պիտանի չէր: Նա, կրկնում եմ, մոտ երեսուն տարեկան էր, ծխող ու շատ իմացող: Միշային հետաքրքրում էր ամուսնության հրեական ավանդական տարբերակը: Մաքուր աղջիկ՝ տնային տնտեսությամբ զբաղվելու հակումներով: Մեկի հետ ծանոթացրել էին: Իրոք, սքանչելի Ռոզոչկա էր, բեղիկներով:

Կարդացող, մտածող: Առեւտրական հայրիկ...

Ռոզան աչքերը միամիտ-միամիտ թարթում էր, կրկնելով .

Օ՛յ, ինչպե՞ս թե ամուսնանալ: Ես, ախր, փորձ չունեմ...

Ինչ չունե՞ս, հոհոում էր Շաբլինսկին:

Իսկ Մարինային լքեց: Այստեղ էր, որ հայտնվեցի ես: Մտածկոտ, բարեկիրթ, ազնիվ: Նա ինձ, կարծես, առաջին անգամ տեսավ: Առաջին անգամ գնահատեց:

Իմ բարենասանությունները մի հետաքրքիր հատկանիշ ունեն: Դրանք ծաղկում ու նկատելի են դառնում ուրիշների այլանդակության համեմատությամբ: Դրա համար էլ ինձ լքված կանայք են սիրում:

Սկզբում անվերջ Շաբլինսկուց էր խոսում:

Գիտես, յուրովի նա սիրում էր ինձ: Մի օր կշտամբեցի՝ «Չես սիրում»: Գիտե՞ս ինչ արեց: Վերցրեց հագուստս, պայուսակս ու կախեց...

Որտե՞ղից:

Չե՞ս հասկանում... Գիշեր էր: Պատկած էինք: Ասացի՝ «Չես սիրում»: Վերցրեց շորերս, պայուսակս ու կախեց: Հենց այն բանից: Որ ապացուցի, թե ինչ ուժ ունի: Ու ինչպես է ինձ սիրում...

Մի խոսքով, հեռուստատեսությունից գնում եմ Մարինայի մոտ: Նորակառուց թաղամասի նրա շենքում ապրում են գործընկեր-լրագրողներ: Տրոլեյբուսից իջնում ես՝ ամայի տարածքում հսկայական շենք է, եւ յուրաքանչյուր պատուհանից մի գործընկեր է նայում:

Բարձրանում եմ շորերդ հարկ, զանգում եմ: Ու նոր հիշում եմ, որ Շաբլինսկու բաճկոնով եմ: Դուռը բացվում է: Մարինան ապշած ինձ է նայում: Գուցե մտքով անցնում է, թե ես Շաբլինսկուն մորթել եմ (խանդից), իսկ շորերը՝ գողացել:

(Կանայք ինչ-որ գերբնական հիշողություն ունեն հագուստի առումով: Կինս մեկի մասին ասում էր . «Ախր դու նրան հիշում ես: Տիտ մարդ էր՝ սեւ կոշիկներով ու դարչնագույն կոշկաքուղերով»:)

Լավ մարդու հարաբերությունները կանանց հետ միշտ դժվարությամբ են հաստատվում: Իսկ ես լավ մարդ եմ: Ասում եմ առանց դույզն իսկ շփոթմունքի, որովհետեւ դրանում հպարտանալու ոչինչ չկա: Լավ մարդուց ակնկալում են համապատասխան պահվածք: Նրան բարձր պահանջներ են ներկայացնում: Նա իր ուսերին կրում է ազնվության, խելքի, ջանադրության, խղճի, հումորի ամենօրյա բեռը: Եվ այդքանից հետո նրան լքում են մի անհույս տականքի համար: Որին ծիծաղելով պատմում են լավ մարդու ձանձրալի բարենասնությունների մասին:

Կանայք միայն սրիկաներին են սիրում, դա հանրահայտ է: Ոչ բոլորին է, սակայն, բախտ վիճակված սրիկա լինել: Ակուլա անունով մի ծանոթ վայրուտչիկ ունեի: Կնոջը բահի կոթով էր ծեծում: Սիրուհու շամպունը մի անգամ նվիրել էր կնոջը: Սպանել էր կատվին: Կյանքում միակ անգամ կնոջ համար պանրով բուտերբրոդ էր սարքել: Կինն ամբողջ գիշեր լացել էր՝ խանդաղատանքից ու հուզմունքից: Տասը տարի պահածո էր ուղարկում Մորդովիա: Սպասում էր...

Իսկ լավ մարդը ո՞ւմ է պետք, մի հարցնող լինի...

Եվ այսպես, ես՝ ուրիշի բաճկոնով:

Ի՞նչ է եղել, ասում է Մարինան, այդ զգեստափոխությունը դիտելով որպես սեռական կտտանքի տարատեսակ: Որպես զգացմունքների վիրավորական նենգափոխում...

Սա Միշկայի բաճկոնն է, ասում եմ, ժամանակավորապես, հանդիսավորության համար:

Պատրաստվում ես ինձ առաջարկությո՞ւն անել (լեղախառն հումոր):

Եթե լուրջ մարդ լինեի՝ կանեի:

Մի վախեցիր:

Պետք է խոսենք թաղման ժամանակ: Իվեսն է մեռել:

Իվեսը: Հեռուստատեսությունից: Սոսկալի է... Կերե՞լ ես:

Չեմ հիշում: Ես Իվեսին երբեք չեմ տեսել:

Կարկանդակով արգանակ կա եւ բադ:

Բեր: Չգնա՞մ խանութ:

Ունեմ: Շշի տակ մնացել է:

Այս կուլտուրական տները լավ գիտեմ: Սրբապատկերներ, ինքնատեղեր, Նեֆերտիտի... Ինչ-որ բազմանշանակ կավե բեկորներ... Բազմաթիվ գրքեր, եւ բոլորը կուսականորեն նոր... Իսկ օդին՝ շշի տակ: Միշտ շշի տակ: Որտեցի՞ց էլ հայտնվում է: Ո՞վ է բերել: Ինչո՞ւ մինչեւ վերջ չի խմել: Ավելի կարեւոր գո՞րծ է առաջացել:

Խանդելու իրավունք չունեմ: Կին, ալիմենտ... Երկար պատմություն է: Կոմպոզիցիան կխաթարվի...

Որտեղի՞ց օդի, հարցնում եմ, ո՞վ էր եկել: Չեմ խանդում: Անտարբեր եմ: Խաղ է պարզապես:

Էդիկն էր եկել: Դեպքեսիայի մեջ է:

Նկատի ունի բանաստեղծ Բոգատիրեին: Ձգձգված ազգանուն, ակնոց, խելահեղ քրքիջ: Նրա բանաստեղծությունների գիրքը տեսել եմ՝ «Բարու ներքնաձիգ», կամ «Սրտի կիսորդ», սրա պես մի բան: Անհանգ բանաստեղծություններ են: Վստահ չեմ, սակայն: Գրում է, օրինակ .

Գնում էինք կողք-կողքի, ինչպես արցունքի գույգ կաթիս, Ու չէինք միանալու երբեք...

Իսկ վերջում նշում կար՝ «Դեկտեմբերի լույս 22-ի գիշեր: Լենինգրադ Տալլին ճեպընթաց»:

Նա ե՞րբ դեպրեսիայի մեջ չէ: Իր աշխատանքային վիճակն է: Իսկ Բուշի համար աշխատանքայինը հարբած վիճակն է...

Մի չարացիր:

Լավ...

Ուզո՞ւմ ես տեսնել օրագրումս ինչ եմ գրել: Քո մասին:

Մուգ կարմիր մի նոթատետր բերեց: Շապիկին ոսկեգօծ տատերով գրված էր . «Տալլինի կուսակցական կոնֆերանսի պատգամավոր»:

Սա մի կարդա: Սա էլ մի կարդա: Սա կարդա:

«Նա մարմնիս տոնն էր ու հոգուս հյուրը: Գիշեր, օգոստոսի 19 20: 1975 թ . . »:

Կարդացի ու ցնցվեցի: Մենյակն անտանելի շոգեց: Երկնագույն պատերը սկսեցին լողալ: Աչքիս ամեն բան ճոճվում էր: Շնչահեղձ չլինելու համար դուրս փախա: Պատերին քսվելով ինձ զցեցի լողասենյակ: Խոնարիվեցի լվացարանի վրա՝ հենվելով հաղձապակե սառը կողերին: Փսխեցի: Գլուխս դեմ տվի սառը ջրին:

Սարինան բարեկրթորեն սպասում էր միջանցքում: Չետո հարցրեց .

Երեկ խմե՞լ ես: Նորից մի սկսիր...

Ցավալի է տեսնել, թե ինչպես ես կործանվում:

Գիտես, ասում եմ, պարտվելը մեր պայմաններում գուցե ավելի արժանապատիվ է, քան հաղթելը:

Դու ընթրշխնում ես քո պակասավոր վիճակը: Դու հիանում ես քո անհաջողություններով, սեթեւեթում ես...

Կիտրոն ունե՞ս:

Հիմա:

Նստած կիտրոն եմ ծամում: Դեմքիս համապատասխան արտահայտությամբ:  
Մարինան իր էջն է քշում .

Ճշմարիտ տաղանդը մի օր հարթում է իր ճանապարհը: Վաղ թե ուշ կայանում է:  
Գրիր, աշխատիր, համառ եղիր...

Համառ եմ: Ու համատությունս կարծես թե արդեն փոխհատուցվում է: Ինձ արդեն  
խիստ նկատողություններ է անում Կենտկոմի մշակույթի գծով հրահանգիչը:  
Լսիր, ի՞նչ եղավ: Ասում էիր՝ շշի տակ...

Ինչ-որ արտասահմանյան տխմար բան բերեց ու երկու բաժակ: Երաժշտություն  
միացրեց: Բնականաբար՝ Վիվալդի: Արդեն վաղուց խմելու ձայնային ֆոն է  
դարձել...

Գիտես, ասում եմ, երագում էի մի փոքր ապրել նորմալ պայմաններում:

Ես ուզում եմ քեզ տեսնել ուժեղ, պայծառ ու նպատակամղված:

Քո ասածը Շաթլինսկին է:

Բնավ ոչ: Բնական եղիր:

Ինձ համար, երեի, անբնական լինելն է բնական:

Դու ամեն ինչ բարդացնում ես: Կարգին մարդ լինելը այնքան էլ մեծ նվաճում չէ:

Իսկ դու փորձիր:

Կոպտելը պարտադիր չէ:

Ճիշտ է ասում, մտածում եմ, ինչ եմ վրա տվել... Գեղեցիկ կին է: Բավական է  
ձեռքս մեկնեն: Մեկնեցի: Երաժշտությունն անշատեցի: Բաժակը վայր գցեցի...

Լսում եմ . «Միշկա, սպանում ես ինձ»: Ու հագիվ լսելի ձայն . Մարինան ազատ ձեռքով բաժակն է բարձրացնում...

Միշկան, ասում եմ, գործուղման մեջ է:

Տեր Աստված . . .

Ջգվեցի ու գնացի: Ավելի ճիշտ՝ մնացի:

Առավոտյան ելույթիս տեքստը պատրաստ էր .

«Ընկերներ: Վշտալի առիթով ենք այստեղ հավաքվել: Վախճանվել է Հուրերս Իվկեսը՝ հայտնի վարչարարը, կուսակցական պարտքի զգացումով ապրող մարդը»... Հետո գալիս էր յասսակն ու ծառայությունների թվարկումը: Աշխատանքային գրքույկի գրականացված տարբերակը: Եվ վերջում՝ «Նրա հիշատակը կապրի մեր սրտերում»...

Այս թղթով էլ գնացի հեռուստատեսություն: Կարդացին ու՝

Փոքր-ինչ վերացական է: Դա, թերեւս, նույնիսկ լավ է: Ավելի պաշտոնական ելույթների համեմատությամբ:

Ջանգեցի խբագրություն: Ասացին .

Դու հուղարկավորության հանձնաժողովի տրամադրության տակ ես: Մինչեւ վաղը: Չառ:

Հուղարկավորության հանձնաժողովում աշխատանքային իրարանցում էր, որ նման էր խմբագրությունների մթնոլորտին՝ կեղծ մտահոգությամբ ու բարձրագույն տենդագին անպտղությամբ: Միջանցքում կանգնած ծխում էի հրշեջ արկղի մոտ: Ինձ մոտեցավ Բիկովերը: Ամեն մի խմբագրությունում այդպիսի արտասովոր մեկը կա՝ հրեա, խելագար, շատ խելոք: Ինչպես ամեն մի բնակավայրում՝ սեփական հանրածանոթ խենթը: Ուշագրավ է Բիկովերի ճակատագիրը: Նա Ռեվելի մի գործարանատիրոջ կրտսեր որդին էր: Ավարտել էր Քենթրիջը: Հետո բուրժուական էստոնիան տապալվեց: Որպես առաջադեմ մտածող հրեա,

Ֆինան հեղափոխության կողմնակից էր: Ակսեց աշխատել հանրապետական թերթի արտասահմանյան բաժնում: (Լեզուների ինացությունը օգնեց): Եվ ահա պատասխանատու հանձնարարություն է ստանում . Չանգել Բուլղարիա՝ Դիմիտրովին: Էստոնիայի Խորհրդային Հանրապետության հոբելյանի առթիվ շնորհավորական ուղերձ պատվիրելու: Բիկովերը գանգում է Սոֆիա: Հեռախոսը վերցնում է Դիմիտրովի քարտուղարը:

Ես Տալլինից եմ, հայտարարում է Բիկովերը: Ի պատասխան լսվում է .

«Միրելի ընկեր Ստալին: Ազատատենչ բուլղար ժողովուրդը ջերմորեն ողջունում է ձեզ: Թույլ տվեք աշխատավորների անունից գեկուցել...»:

Ես Ստալինը չեմ, բարեհոգաբար ուղղում է Բիկովերը: Ես Բիկովերն եմ: Իսկ գանգել եմ ասելու, որ վատ չէր լինի հոբելյանի հետ կապված մի փոքրիկ շնորհավորագիր կազմակերպելինք... Բառացիորեն մեկ-երկու տող...

Քառասուն րոպեից Բիկովերին ձերբակալում են: Սրբապիղծ համադրության համար: Սրբությունը ծաղրելու համար: Ապուշ լինելու համար:

Դրանից հետո շատ բան եղավ: Հետաքննություն, կարճատեւ ճամբար, ռազմաճակատ... Հետո վերադառնում է: Ընդունվում է ինչ-որ գրադարան: Դիպլոմ չուներ (Քենբրիջը հաշիվ չի): Ստանում էր ութսուն ռուբլի: Այդ ընթացքում ամուսնանում է: Կինը միշտ հիվանդ էր, բայց պարբերաբար ծնում էր: Թշվառ, ահաբեկված, կիսախելագար Բիկովերը խմբագրությունների ընդունարաններից դուրս չէր գալիս: Գրում էր կոպեկանոց ինֆորմացիաներ՝ բացառիկ խղճուկ բովանդակությամբ: ««Կալեւ» ֆաբրիկայի մոտ որմզդեղն են տեսել»: «Պաշտոնաթող մայրի տանը ծաղկել է հսկայական կակտուսը»: «Լույս է տեսել Գրիգորովիչի հերթական հատորյակը»: Եվ այլն: Բիկովերը ամեն օր գանգում էր ծննդատուն՝ եռյակ հո չի՞ ծնվել: Ամսեամիս ներկայացնում էր լայն սպառման ապրանքների նորույթները: Տարեցտարի տեղեկացնում էր որսաշրջանի բացման մասին: Նրան բոլորս սիրում էինք:

Ողջույն, Ֆինա, ասացի՝ սրբապղծորեն կայտառ ձայնով:



Ի՛նչ դժբախտություն, ի՛նչ դժբախտություն, պատասխանեց Բիկովերը:

Ասում են, հանգուցյալը ստահակ էր:

Մեղմ ասած, մեղմ ասած...

Լսիր, Ֆի՛մա, ասում են, դու երբեւէ փորձե՛լ ես մեջքդ ուղղել: Լիաթոք խոսե՛լ:

Այնպիսի հայացքով նայեց վրաս, որ կարմրեցի:

Գիտե՛ս ինչ կուզեի, ասաց: Կուզեի անտեսանելի լինել: Որ առհասարակ գոյություն չունենայի: Հաճույքով տեղս Իվկեսի հետ կփոխեի, բայց երեխաներ ունեմ: Երեք երեխա: Եվ բոլորին ոտնաման է պետք:

Ինչո՞ւ ես եկել:

Ես չէի ուզում: Մտածում էի այսպես, ենթադրենք, Բիկովերն է մահացել: Իվկեսը թաղմանը կգա՞ր: Կյանքում չհավատաս: Ուրեմն՝ ես էլ չեմ գնա: Բայց կինս ասաց . «Գնա, Ֆիմա: Այնտեղ բոլորը կլինեն: Այնտեղ պիտանի մարդիկ կլինեն»...

Իսկ ես պիտանի՞ մարդ եմ:

Չէի ասի: Բայց դու լավ մարդ ես...

Դռնից դուրս նայեց սգո թեկապով մի աղջիկ .

Շաբլինսկին այստեղ ո՞վ է:

Ես եմ, ասացի:

Ուրեմն այսպես: Իվկեսը դիարանում է: Նրան կարգին հագցրել են: Մուգ կապույտ կոստյում: Բայց փողկապ չկա: Չարմիկը սնր է բերել: Եվ հարկավոր է ժուռնալիստների միության կրծքանշանը ամրացնել դարձածալին...

Ինքս փողկապով էի: Մեկ տարի առաջ ֆարցովշչիկ Ակուլան էր նվիրել: Ինքն էլ կապել էր ինչ-որ արտակարգ ձեռով: Ա–լյա Ֆրենկ Սինատրա: Դրանից հետո այդ փողկապը չեմ արձակել: Հանգույցը թուլացնում եմ, օղակը լայնացնում, զգուշությամբ հանում՝ ականջներս տրորելով: Հակառակ գործողություններով կրկին հագնում եմ...

Ես, երեւի, չկարողանամ...

Ես կարող եմ, ասաց Բիկովերը:

Հրաշալի է, ուրախացավ աղջիկը, բեռնատարը ներքեւում է: Վարորդն ու հնչյունային օպերատոր Ալտմյանն այնտեղ են: Ահա փողկապն ու կրծքանշանը: Հանգուցյալին կբերեք այստեղ: Այստեղ արդեն ամեն ինչ պատրաստ կլինի: Արարողությունը սկսվելու է ուղիղ երեքին: Ալտմյանին կասեք, որ ֆոնը պետք է ցայտուն լինի: Ինքը գիտի...

Հագնվեցինք, վերելակով իջանք: Բիկովերն ասաց .

Ես էլ պիտանի եղա:

Ներքեւում փակ բեռնատար էր կանգնած: Հնչյունային օպերատոր Ալտմյանն ննջում էր խցիկում:

Ողջույն, Օսկար, ասում եմ, նկատի ունեցիր, ֆոնը պետք է ցայտուն լինի:

Ի՞նչ ֆոն, զարմացավ Ալտմյանն:

Դու գիտես:

Ի՞նչ գիտեմ:

Աղջիկը խնդրեց, որ քեզ ասեմ:

Ի՞նչ աղջիկ:

Դե լավ, ասում եմ, քնի:

Նստեցինք փակ թափքում: Բիկովերն ուրախ էր .

Լավ է, որ կարող եմ օգտակար լինել: Իվեսը պիտանի մարդ է:

Ո՞վ է պիտանի, ապշեցի:

Կրտսեր Իվեսը, որդին:

Իսկ ի՞նչով է զբաղվում:

Պրոպագանդայի բաժնում է աշխատում:

Այս կողմում նստիր, ասում եմ, ավելի քիչ է թափ տալիս:

Ինձ ամեն տեղ միատեսակ են թափ տալիս: Ժամանակին ճամբարում պահակ եմ եղել: Հենց այսպիսի փակ մեքենաներով կալանավորներ են տեղափոխել: Մեքենան ավտոզակ էր կոչվում: Դրանում, բացի ընդհանուր «սրահից», երկու նեղ մետաղապատ պահարաններ կային: Բաժակ էին կոչվում: Դրանցում՝ արմունկներն ու ծնկները պատերին հենելով, մեկ մարդ կարող էր տեղավորվել: Պահակները դրսում էին: Երկաթե դուռը նեղ դիտանցք ուներ: Կալանավորները դրան ասում էին՝ «Ես քեզ տեսնում եմ, դու ինձ՝ չէ»: Հանկարծ զգացի երկաթե բաժակում լինելու տհաճությամբ: Թեև տասնվեց տարի է անցել...

Թափքի մետաղե տանիքին ճյուղեր քավեցին: Բեռնատարը կանգ առավ: Լույս աշխարհ ելանք: Ճյուղերի միջով երեւում էր դիահերձարանի դեղին պատը: Դռան աջ կողմում գանգի կոճակն էր: Սեղմեցի: Դուռը բացեց մոմլաթե խալաթով մի տղամարդ: Ալտմյանն փաստաթղթեր հանեց ու էստոներեն մի քանի բառ ասաց: Հերթապահը ձեռքի շարժումով մեզ ներս հրավիրեց:

Ես չեմ գալիս, ասաց Բիկովերը, կուշաթափվեմ:

Ես էլ չեմ գալիս, ասաց Ալտմյանն, հետո մղձավանջային երազներ կտեսնեմ:

Լավ եք անում, ասում եմ, սկզբից ասեիք:

Հույսներս քո վրա էր: Բոյիդ-բուսաթիդ նայիր:

Ես փողկապ կապել չգիտեմ:

Կսովորեցնեմ, ասաց Բիկովերը, ցույց կտամ, թե ինչպես են կապում  
«Քենբրիջյան լոտոսը»: Այստեղ կվարժվես ու ներսում կկապես:

Ես կգայի, ասաց Ալտմյանն, բայց չափազանց զգայուն եմ: Առհասարակ  
մեռելներին չեմ հարգում: Իսկ դո՞ւ:

Մեռելների համար, ասում եմ, խելքս ինը չէ:

Նայիր ու սովորիր, ասաց Բիկովերը, ընկալիր հայելակերպ: Նեղն այստեղ,  
լայնն այստեղ: Փաթաթում ես երկու անգամ: Ծայրը հանում ես: Այստեղ պահում  
ես ու աստիճանաբար ձգում: Տես: Սիրուն է, չէ՞:

Վատ չէ, ասում եմ:

«Քենբրիջյան լոտոսի» առավելությունն այն է, որ հեշտ է արձակվում: Այս  
ծայրից թեթեւ ձգում ես՝ վերջ:

Իվկեսը երջանիկ կլինի, ասաց Ալտմյանն:

Հասկացա՞ր ոնց պիտի անես:

Ոնց որ, ասում եմ:

Մի հատ փորձիր:

Բիկովերը պատրաստակամությամբ դեմ տվեց պզուկաձածկ վիզը:

Դե լավ, ասում եմ, հիշում եմ:

Դիարանում ցուրտ էր, մեր քայլերին խուլ արձագանք էր հետեւում:  
Շագանակագույն, ցեմենտե պատեր, հրշեջ վահանակ՝ աչք ծակելու աստիճան  
կարմիր կրակմարիչ:

Այս մեկն է, ցույց տվեց հերթապահը:

Դագաղը դրված էր պատուհանի մոտի ալ պատվանդանին: Ոչ թե սովոր դարչնագույն (անկիզելի պահարանի գույնի), այլ սեւ՝ մետաղաթիթեղե եզրակարերով:

Իվկեսը հաստատ մեռած էր: Տեսքն անկենդան էր ու անբնական:

Հերթապահին ցույց տվի փողկապը: Պարզվեց, որ սա ռուսերեն վարժ խոսում է:

Ես բարձրացնեմ, դուք կապեք:

Դին գերանի պես բարձրացրեց: Հետո՝ թեթեւ իրարանցում... «Այդպես... Մի քիչ էլ»... Տից մնացած օձիք, ճմրթված ժանյակներ...

Օքեյ, ասաց հերթապահը, դիպչելով հանգուցյալի մազերին:

Հանեցի կրծքանշանն ու ամրացրի մուգ շեփոտե դարձածալին: Հերթապահը բերեց կափարիչն ու վեց պտուտակ: Հարմարեցրինք, ձգեցինք:

Տղաներին կանչեմ:

Ալտմյանն ու Բիկովերը ներս եկան: Ֆիման ամուր փակել էր աչքերը: Ալտմյանն գունատ ժպտում էր: Դուրս բերեցինք դագաղը, զգվելի ճոռոցով հրեցինք թափքի մեջ:

Ալտմյանն նստեց խցիկում: Բիկովերը ամբողջ ճանապարհին լուռ էր: Իսկ երբ տեղ հասանք, փիլիսոփայորեն նկատեց .

Ապրում էր մարդն, ապրում էր ու մեռավ:

Իսկ ի՞նչ էիր ուզում, ասացի:

Նախասարահում մարդիկ էին հավաքված: Խոսում էին կիսաձայն: Պատերին «Մոլորակի պատանեկությունը» լուսանկարչական ցուցահանդեսի ցուցանմուշներն էին:

Ինձ անձանոթ մեկը՝ թեկապով, բարցրածայն ասաց .

Ծխել կարելի է:

Մարդասիրական այդ աննշան անօրինականությունը բավականություն պատճառեց սգացող հանրությանը:

Անձայն ինչ-որ կարեւոր գործերով գնում-գալիս էին կարգադրիչները: Նրանցից ոչ մեկին չէի ճանաչում: Հուղարկավորության հանդիսությունները, հավանաբար, խախտում են սովորական աստիճանակարգը: Առաջին պլան են մղվում անանուն մարդիկ: Կամավոր կերպով դրանով զբաղվել ցանկացողների թվից:

Մոտեցա նրանցից մեկին:

Դագաղը բերել ենք:

Իսկ կաբե՞լը:

Կաբե՞լը: Առաջին անգամ են լսում:

Լավ, ասաց, կարծես թերացումս այնքան էլ լուրջ չէր:

Հետո բարձր, բայց վշտալի երանգները պահպանած ձայնով՝

Նստեք մեքենաները, ընկերներ:

Երկու կին շտապելով եւ ուշացումով հատակին էին գցում եղեւնու ճյուղեր:

Մենք, կարծես թե, այլեւս պետք չենք, ասաց Ալտմյան:

Ես պետք է այնտեղ խոսեմ:

Վերջում ես խոսելու: Նախ խոսելու են Կենտկոմի ընկերները: Իսկ հետո՝ ով չի ալարի: Բոլոր ցանկացողները:

Ի՞նչ է նշանակում՝ բոլոր ցանկացողները: Ինձ հանձնարարել են: Տեքստս հաստատել:

Բնականաբար: Քեզ հանձնարարել են լինել ցանկացողներից: Ես ցուցակը տեսել եմ: Դու ութերորդն ես: Լենքիտից հետո: Նա ուզում է, որ բոլորը երգեն: Այդպիսի երգ կա՝ «Կռունկներ»: «Երբեմն ինձ թվում է, թե զինվորները...» եւ այլն: Լենքիտն առաջարկելու է միասին երգել այն՝ ի պատիվ Իլվեսի:

Այդ ո՞վ կերգի: Այն էլ՝ ցրտին:

Բոլորն էլ կերգեն: Կտեսնես:

Դու, օրինակ, կերգե՞ս:

Ոչ, ասաց Ալտմյանն:

Իսկ դո՞ւ, դարձա Բիկովերին:

Պետք եղավ՝ կերգեն, պատասխանեց Ֆինան... Մարդիկ շարժվում էին դեպի ելքը: Շատերը՝ ծաղկեպսակներով, ծաղկեփնջերով ու անգամ ծաղկամաններով: Մուտքի մոտ մեր բեռնատարից բացի ավտոբուսներ էին կանգնած: Կարգադրիչն մոտեցավ ինձ .

Ընկեր Շաբլի՞նսկի:

Նա գործուղման մեջ է:

Բայց դո՞ւք եք «Սովետական Էստոնիայից»:

Ես եմ: Ինձ հանձնարարված է...

Դին դո՞ւք եք բերել:

Երեքով:

Հետագայում էլ կուղեկցեք: Իսկ սա՝ որ չմրսեք:

Ինձ մեկնած փաթեթը կլկլաց: Դա քողարկված հոնորար էր: Հարյուր գրամ՝ հարձակումից առաջ: Շփոթվեցի, բայց ոչինչ չասացի: Փաթեթը գրպանս դրեցի:

Պատմեցի Բիկովերին ու Ալտմյանին: Մտանք բուֆետ, բաժակներ խնդրեցինք:  
Ալտմյանն երեք հատ բուտերբրոդ գնեց: Նախասրահը դատարկվել էր:  
Դեղնավուն հատակը ծածկված էր եղեւնու ճյուղերով: Մոտեցանք  
բեռնատարին: Վարորդն ասաց .

Խցիկում տեղ կա:

Ոչինչ, ասում է Ալտմյանն:

Սրան մի քիչ լցնե՞մ, շնչացի:

Երբե՛ք, կտրեց Բիկովերը:

Դագաղը նույն տեղում էր: Որոշ ժամանակ նստեցինք կիսախավարում: Հետո  
շարժիչն աշխատեց: Ալտմյանն բուտերբրոդները դրեց դագաղի կափարիչին: Ես  
հանեցի խմիչքը: Ֆիման ատամներով բացեց շիշը: Հագիվ լսելի գնգացին  
բաժակները: Մեքենան շարժվեց:

Ողորմի, տխուր ասաց Բիկովերը:

Ալտմյանն մոռացավ որտեղ ենք ու բացականչեց .

– Լավ է:

Խմեցինք: Շիշը դրեցինք նստարանի տակ: Թուղթը լուսամուտից դուրս գցեցինք:

Բաժակները վերադարձնել է պետք, ասում են:

Դեռ պետք կգան, նկատեց Բիկովերը: ...Բեռնատարը անցավ երկաթգիծը:

Հասնում ենք, ասաց Բիկովերը:

Նրա ձայնը կյանքի ունայնության երանգներ էր պարունակում:

Լիննամետսի գերեզմանատունը գտնվում էր կեչեպատ ու մամռոտած մեծ  
քարաբեկորներով ծածկված բլուրների վրա: Նայելով այդ դեկորատիվ



քարերին, լրագրողները շտապում են ասել . «Սառցադաշտային դարաշրջանի մնացորդները»: Կարծես տեսել ու լավ հիշում են անդրպատմական ժամանակները:

Այստեղ ամեն բան համապատասխանում էր ամնահույժյան ու հանգստության գաղափարին: Բլուրները նման էին հինավուրց ամրոցի ավերակների: Հեռվում աղմկում էր անտեսանելի ծովը: Թեթև քամին ճոճում էր կեչիների գագաթները: Դրանց զուգահեռ բների վրա կեղելը խավանման ծլեպներ էր տվել:

Իսպառ բացակայում էին հայտարարությունների տախտակները, ցուցապաստառները, կրպակներն ու աղբամանները: Ջրի ու քարի հանդիսավոր միասնություն: Լռություն:

Մեքենան շարժվում էր գերեզմանատան գլխավոր ծառուղով: Վարորդն արգելակեց: Բացվեց երկաթե դուռը: Մեր ետեւից շարվել էին ավտոբուսները: Մոտեցավ կարգադրիչը .

Քանի՞ հոգի եք:

Երեք, ասում եմ:

Եվս երեք հոգի է պետք: Հասկացա, որ դագաղը մեր վրա է:

Ավտոբուսների մոտ խմբված-կանգնած էին ծաղկեպսակներով ու ծաղկեփնջերով մարդիկ: Անսպասելիորեն ու խլացուցիչ հնչեց երաժշտությունը: Առաջին ակորդը արձագանք տվեց: Երեք հաղթանդամ երիտասարդներ միացան մեզ: Երիտասարդական թերթի արտահաստիքային թղթակիցներ էին: Նրանցից մեկի հետ հաճախ պինգ-պոնգ էի խաղում: Հանեցինք դագաղը: Շրջադարձ կատարեցինք ու տեղ գրավեցինք շարասյան գլխամասում: Հնչում էր Շոպենի թաղման քայլերգը: Ծանր բեռով դանդաղ քայլելը փորձություն է: Հոգնել էի:

Բիկովերը ատամների արանքից ասաց .

Ծանր է սրիկան...

Արի արագացնենք ասում են:

Քայլն արագացրինք: Նվագախումբը արագացրեց տենայր: Ավելի արագացրինք: Քայլում-դեկավարում ենք նվագախումբը: Բիկովերն ասում է .

Հիմա վայր կընկնեն: Եվ բարձրաձայն .

Փոխարինեք մեզ, ընկերներ... Լսո՞ւմ եք: Նրան փոխարինեց ռադիոմեկնաբան Օյան:

158

Ծառուղու վերջում սեւին էր տալիս նոր փորած քառանկյուն գերեզմանը: Կողքին՝ հողի թարմ թումբ: Երաժիշտները կիսաշրջան կազմեցին: Երբ երաժշտությունը լռեց, վերջապես ցած դրինք դագաղը: Հավաքվածները շրջապատեցին շիրմափոսը: Կարգադրիչն ու նրա օգնականները հանեցին դագաղի կափարիչը: Տեսա, որ փողկապը տեղում է, ու մի կողմ քաշվեցի:

Հեռուստատեսության տղաները սկսեցին տեղադրել սարքերը: Լամպերի վառ լույսը անհարիր էր թվում: Խոտի մեջ ձգվում էին սեւ լարերը: Բիկովերն ու Ալտմյանն մոտեցան ինձ: Մեզ միավորել էր, թերեւս, միասին խմած օղին: Ծխեցինք: Կարգադրիչը լռության հրավիրեց: Սկսեց խոսել առաջին հոնտորը վելվետե նոր գլխարկը ձեռքին: Ես չէի լսում: Նրան հետեւեցին մյուսները:

Ուղիղ եթեր է, ասաց Բիկովերը: Հետո ավելացրեց Անձամբ ինձ շան պես են թաղելու:

Մանէպիդկայանը թույլ չի տա, ասաց Ալտմյանն: Մահվանդ ճամփան սալահատակված է բովանդակագուրկ ինֆորմացիաներով:

Շատ էլ բովանդակալի, վրդովվեց Բիկովերը:

Խոսքը տրվեց «Իխտու լեխտ» թերթի մի պատասխանատու աշխատակցի: Մի նախադասություն հասավ ականջիս . «Նրա հայրն ու պապը պայքարել են Էստոնական ինքնակալության դեմ»:

Ի՞նչ է ասում, ապշեց Ալտմյանն: Էստոնիայում ինքնակալության չի եղել:

Դե, ցարիզմի դեմ, ասաց Բիկովերը:

Էստոնական ցարիզմ էլ չի եղել: Եղել է ռուսական ցարիզմ:

Այ, հրեական ցարիզմ իրոք չի եղել, նկատեց Ֆիման, ինչը չի եղել՝ չի եղել:

Մոտեցավ կարգադրիչը:

Դո՞ւք եք Շաբլինսկին:

Նա գործուղման մեջ է:

Հա, ճիշտ է... Պատրաստ եք: Հաջորդը չէ, մյուսը դուք եք...

Ալտմյանն ծխախոտ հանեց: Վառիչը չէր գործում, բենզինը վերջացել էր: Բիկովերը գնաց լուցկի բերելու: Մի բոպեից վերադարձավ ու շնչաց .

Հիմա ծիծաղից կմեռնեք: Այնտեղ Իլվեսը չէ: Ծխախոտը Ալտմյանի ձեռքից ընկավ:

Այսի՞նքն, հարցրի:

Իլվեսը չէ: Ուրիշ մարդ է: Ավելի ճիշտ՝ ուրիշ հանգուցյալ...

Ֆիմա, խելքդ գլխի՞դ է:

Քեզ ասում են՝ Իլվեսը չէ: Նման էլ չէ: Ես, ինչ է, Իլվեսին չե՞մ ճանաչում:

Գուցե սադրա՞նք է, ասաց Ալտմյանն:

Երեւի դու ես շփոթել:

Հերթապահն է շփոթել: Ես Իլվեսին կյանքում չեմ տեսել: Հարկավոր է մի բան անել, ասում եմ:

Այդ էր պակաս, ասաց Բիկովերը, իսկ ուղիղ եթե՞րը:

Բայց չէ որ խայտառակություն է:

Գնամ նայեմ, ասաց Ալտմյանն:

Գնաց, եկավ ու ասում է .

Իրոք, Իվկեսը չէ: Բայց նմանություն կա...

Իսկ հարագատները, մերձավորները, հարցնում են:

Իվկեսը, ըստ էության, հարագատներ ու մերձավորներ չունի, ասաց Ալտմյանն, նրան, անկեղծ ասած, չէին սիրում:

Բա ասում էին՝ որդի, զարմիկ...

Քեզ նրանց տեղը դիր: Ուղիղ եթերով հաղորդվում է: Եվ առհասարակ՝ պատասխանատու միջոցառում է...

Գերեզմանի մոտ սկսեցին երգել: Առանձնանում էր կենցաղի բաժնի Լյուբա Տրոշինայի ճղճղան ձայնը: Կարգադրիչն ինձ գլխով արեց: Մոտեցա գերեզմանին: Երգեցողությունը, վերջապես, դադարեց:

Հրաժեշտի խոսք ունի... Ազգանունս, իհարկե, աղավաղեց .

Հրաժեշտի խոսք անի ընկեր Դուլնաթովը:

Կյանքում ով ասես չես եղել՝ Դոկլադով, Ջապլատով... Բաց գերեզմանում ջրափոսեր կային, երեսում էին մերկացած ծառարմատները: Կողքին հատուկ փայտե պատվանդանի վրա դազաղն էր: Անհայտ հանգուցյալը ծածկված էր ծաղիկներով: Թրաշուշաններով ու խոլորձով շրջապատված նրա խեղճուկրակ դեմքը հագիվ էր երեսում: Անվանափոխ հանգուցյալը այլևս առարկա էր: Նայեցի կեչիների ծայրերին հենվող երկնագույն գմբեթին: Թռչունները ճախրում էին, ինչպես հեռուստացույցի էկրանին: Մուստամյանի շենքերի վրա իշխող եկեղեցու շլացուցիչ դեղին սրածողը էլ ավելի էր ընդգծում դրանց գորշ

ու–քաւնութիւնը: Շիրմի շուրջը կանգնած էին անձանք մարդիկ մուգ վերարկուներով: Ջգացի ծաղիկների ու եղեւնու սուր բուրմունքը: Անհարմար դագաղի պատերը ճնշում էին ուսերս: Ծաղիկների թերթիկները խտղտացնում էին կրծքիս հանգչող էստերս: Գլխավերեւումս կանգնած հեռուստաօպերատորը անկիրք էր ու գործնական: Հնչում էր հեռվից եկող, ինքնահիացման երանգներ կրող ձայնը .

«... Ես այս մարդուն չեմ ճանաչել: Ծանոթ չեմ եղել նրա հոգուն, նրա մղումներին, նրա տոկունությանն ու խիզախությանը, հուսախաբություններին ու հույսերին: Չեմ հավատում, որ ճշմարտությանն առանց որոնումների է հասել: Չեմ կարծում, թե նրա հանգչող հայացքին հասու է դարձել ունայն կյանքի, անսքող խորամանկության, չորախացնող հաղթանակների ու շղատնացնող պարտությունների չափանիշը: Չեմ կարծում, թե հասկացավ՝ ուր ենք գնում եւ ինչով է ուրախալի ու արժեքավոր մեր տենդագին նահանջը: Եվ, այդուհանդերձ, նա այստեղ է... իր իսկ ընտրությամբ...»:

Տրտունջի ու բողոքի ձայներն աստիճանաբար ավելի բարձր էին հնչում: Խուլ շշուկների ծվեններն ասում էին՝ «Այս ի՞նչ է խոսում...»: Թեւիքս քաշեցին: Ուսս թոթափեցի ու շարունակեցի .

«Ինչի՞ մասին եմ մտածում այստեղ կանգնած: Մարդկային հոգու գաղտնիքների մասին: Մահն ու հոգեկան վիշտը հաղթահարելու մասին: Կեցության օրենքների մասին, որ ծնվել են հազարամյակների խորքում ու կապրեն, քանի դեռ չի մարել արեւը»...

Չհասկացա, ասաց Ալտմյանն, ասածդ ի՞նչ էր:

Ինքս էլ չհասկացա, ասում եմ, ինչ-որ քառս է շուրջս:

Ես ամեն բան պարզեցի, ասաց Բիկովերը: Նրա դեմքը լուսավորված էր գաղտնիքին հասու խորամանկ ժպիտով: Մա ձկնորսական կոլտնտեսության հաշվապահ Գասայն է: Իվեսին որպէս Գասայլ այս պահին թաղում են Մերիվիլյա գերեզմանատանը: Այնտեղ մեծ սկանդալ է: Քիչ առաջ գանգել են... Ընտանիքը հիստերիայի մեջ է... Որոշվել է թաղել ինչպէս կա...

Կարելի է վաղը կամ անգամ այսօր փոխել գերեզմանաքարերը, ասաց Ալտմյանն:

Չի կարելի, առարկեց Բիկովերը, Իվեսը նոմենկլատուրային աշխատող է: Նա պետք է թաղված լինի այս գերեզմանատանը: Անսասան կարգ գոյություն ունի: Գիշերը դագաղներն են փոխելու...

Հանկարծ կորցրի իրականության զգացողությունը: Նորաբաց աշխարհում հեռանկար չկար: Ապագան մնացել էր թիկունքում: Հորիզոնը փակել էր անցյալը: Սկսեցի մտածել, որ ներդաշնակությունը բանաստեղծներն են հորինել՝ մարդկանց սրտերը հուզելու համար...

Գնանք, ասաց Բիկովերը, հարկավոր է տեղ զբաղեցնել ավտոբուսում: Թե չէ ստիպված կլինենք երկաթե տուփի մեջ վերադառնալ...